ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ք. Երևան 20 ապրիլի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 18-Ա/Ք

ՌԱԶՄԻԿ ՌԱՖԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՎՈԳԻՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ կետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ռազմիկ Ռաֆիկի Գրիգորյանին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պատվոգիր՝ Կոմիտեում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև առանձնացված շտաբային մարզումների նախապատրաստման և անցկացման աշխատանքներին ակտիվ մասնակցության համար:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ